

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

**1. Տավարաբուծություն.** 2022 թվականին շարունակվել է ՀՀ Կոտայքի մարզի «Արգնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի տավարաբուծական տնտեսության 5-ական գլուխ հոլշտին, ֆլեկվի և եռացեղ (1/4 ԿԳ x 1/4 Ջ x 1/2 Հ) գենոտիպի կովերի առաջին և չորրորդ լակտացիաների 5-րդ ամսվա օրական կաթի քանակի, արյան պլազմայում ընդհանուր սպիտակուցի, ալբումինի և գլոբուլինի քանակների, 305 օրվա կաթի և կաթնային մթերատվության որակական ցուցանիշների տվյալների կենսաչափական մշակումները: Որոշվել է նշված գենոտիպերի կովերի օրական կթի ու արյան պլազմայի ցուցանիշների միջև համահարաբերակցական կապը և արդյունքներն ամփոփվել են գիտական հոդվածում:

**Շարունակվել է** եռացեղ և քառացեղ տավարի մատղաշի ստացումը, աճեցումը և գնահատումը: Տնտեսության տավարի բոլոր սեռահասակային խմբերը գտնվել են Գեղամա լեռների արոտավայրում և Դիլիջանի հանդամասում: Տնտեսությունը ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքում ունի մասնաճյուղ, որտեղ աշնանային արոտային շրջանի վերջից պահվում է տավարի տարբեր սեռահասակային խմբերի մատղաշը: ՀՀ Արմավիրի մարզում կան բազմաթիվ ջրատար առուներ և մայր առուների մոտակա տարածքները շուրջ 15-20 մ լայնությամբ չեն օգտագործում որպես վարելահողեր և ծածկված են հարուստ բուսածածկով, աճում են եղեգն, սոյա, տափաստանային տարբեր հացազգիներ, երեքնուկ, առվույտ, ինչը համարվում է լավագույն կերի բազա և կարելի է օգտագործել կենդանիներին կերակրելու նպատակով միայն ձմռան ամիսներին:

Կազմակերպվել է գիտաարտադրական փորձ 15.11.21 թվականից մինչև 15.03.22 թվականը՝ 121 օր տևողությամբ: Ձմեռային արոտն օգտագործելու նպատակով ընտրվել է

10-ական գլուխ տավարի հոլշտին և ֆլեկվի ցեղերի 9 ամսական էգ մատղաշ, որն աճեցվել և հետազոտվել է նորածնությունից սկսած: Յուրաքանչյուր օր ժամը 12<sup>00</sup>- 17<sup>00</sup> կենդանիները գտնվել են արոտում և լրացուցիչ կեր չեն ստացել: Կենդանիների կշռումը և մարմնամասերի չափումները կատարվել են ձմեռային արածեցման սկզբում և վերջում: Կատարվել է հետազոտության տվյալների կենսաչափական մշակում, ուսումնասիրվել է կշռային ու գծային աճը բնութագրող մեծությունները, որն ամփոփված է գիտական հոդվածում:

Առաջարկում ենք ՀՀ Արմավիրի մարզի ֆերմերներին տավարի հետկաթնային շրջանի մատղաշի և տարբեր սեռահասակային խմբերի կենդանիներին արածեցնել ձմեռային արոտներում, որով կբարձրանա արոտների օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև կխնայվի կուտակված կերի ծախսը:

ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 327-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրի շրջանակներում «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի տնտեսությունից ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի «ԳՅՈՒՂ ՖԵՐՄԱ» ՍՊԸ-ի կողմից ձեռքբերված առաջին ծնի կովերի գուգավորման գործընթացը շարունակվել է եռացեղ և քառացեղ կենդանիներ ստանալու նպատակով:

Շահումյանի «Ագրոսպասարկում» ԱՄ ԲԲԸ-ի տնտեսությունում կատարված՝ կովկասյան գորշ x ավստրիական շվից ցեղերի միջցեղային տրամախաչման արդյունքում ստացված F1 և F2 սերունդների մթերատվության գենետիկական շարժը որոշելով գիտականորեն հիմնավորել ենք նախիրների բարելավման ուղիները:

Նախիրների գենետիկական բարելավման սելեկցիոն աշխատանքի գնահատման արդյունքներն ամփոփվել են բոնիտավորման հրահանգում նախատեսված ժամկետների համաձայն, ըստ որի կովերի միջծնային տևողությունը 365 օր է, հղիության տևողությունը՝ 285 օր, արտակազմվածքի, համակազմվածքի և զարգացվածության գնահատումը կատարվում է լակտացիայի երկրորդ ամսում: Ուստի, նախատեսված և հետազոտված գիտական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը կատարվում է 2 տարի հետո: Օրինակ, այս տարի «Վամաքս» ՍՊԸ-ի տնտեսությունում մաքրացեղ

բուժմամբ կատարված զույգընտրությունից ստացված տավարի ծինը սպասվում է 2023 թվականին:

Շարունակվել է «Արգնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ-ի տնտեսությունում եռացեղ և քառացեղ տավարի մատղաշի ստացումը աճի և զարգացման հետազոտության գնահատումը: «Վամաքս» ՍՊԸ-ի տնտեսության 2022 թվականի առաջին եռամսյակում բարձրակիթ կովերի ծնից ընտրվել են 10 գլուխ նորածին էգ հորթեր և աճեցվել ինտենսիվ տեխնոլոգիայով, կատարվել են կշռումներ և մարմնամասերի չափումներ: Էգ մատղաշի կենդանի զանգվածը 6 ամսականում կազմել է 184 կգ, միջին օրական քաշաճը՝ 800 գ, հարաբերական քաշաճը՝ 153 %, աճի գործակիցը՝ 4.6: Հետազոտությունը շարունակվում է մինչև 37 ամսականը՝ առաջին լակտացիայի ավարտը:

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի «ԳՅՈՒՂ ՖԵՐՄԱ» ՍՊԸ-ի կողմից ձեռքբերված կենդանիներից ընտրվել են 10-ական գլուխ երկ և եռացեղ առաջին ծնի կովեր, որոնք զուգավորվել են ֆլեկվի ցեղի ցուլով՝ եռացեղ և քառացեղ կենդանիներ ստանալու նպատակով, ծինը սպասվում է 2023 թվականին:

«Վամաքս» ՍՊԸ-ի տնտեսության նախրի 2021 թվականի կովերի ավարտված լակտացիայի կաթնային մթերատվության, միջծնային, սերվիսի շրջանների տևողությունների ամփոփիչ տվյալները մշակվել են կենսաչափական մեթոդով: Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ «Վամաքս» ՍՊԸ-ի տավարաբուծական տնտեսությունում 4-5-րդ ծիների կովերի սերվիսի շրջանի տևողությունը նորմայից բարձր է 5-58 օրով, վերարտադրողական ունակության գործակիցը (ՎՈՒԳ) տատանվել է 86.3-98.6 %-ի սահմաններում: Ստերջության պատճառով 5-րդ ծնում լակտացիաների կորուստը՝ 16 է, իսկ կաթի քանակի կորուստը՝ 126 տոննա:

Ֆերմերին առաջարկվել է սեռացանկություն ունեցող կենդանիներին ժամանակին հայտնաբերել և սերմնավորել (զուգավորել), ինչպես նաև անասնաբուժական խիստ հսկողություն սահմանել 4-5-րդ ծների կովերի սերվիս շրջանին հետևելու և կարգավորելու նպատակով:

Հանրապետության առաջատար մի շարք տավարաբուծական ֆերմաներում բարձրակիթ կովերի նախիրների պահվածքը և կերակրումը կատարվում են ժամանակակից տեխնոլոգիաներով: Մեր հետազոտությունների նպատակն է ուսումնասիրել և ապահովել կենդանիների մթերատու հատկությունների պահպանումը և բարելավումը Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմաններում: Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները շարադրված են գիտական հոդվածներում:

## ***2. Այծաբուծություն.***

***2.1 Տեխնոլոգիական հետազոտություններ.*** ՀՀ Շիրակի մարզի Կրաշեն համայնքում հիմնադրված այծաբուծական տնտեսությունում շարունակվում է իրականացվել տոհմային, տեխնոլոգիական, գենետիկական և կենսաքիմիական համալիր աշխատանքները: Այծաբուծության ոլորտում 2022 թ. իրականացված հետազոտության նպատակն է եղել զաանենյան ցեղով ինտենսիվ այծաբուծության մեջ գիտականորեն հիմնավորված նոր տեխնոլոգիաների ներդրումը, զաանենյան կաթնային ուղղության ցեղի տոհմային տնտեսությունում տոհմասելեկցիոն աշխատանքների շարունակությունն ու այծաբուծությունից ստացվող շահութաբերության բարձրացումը: Առաջադրված խնդիրներն են եղել գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների ներդրմամբ պահպանել կամ ավելացնել այծերի պտղատվության նախորդ տարվա ցուցանիշը, կաթնային մթերատվությունը, այծի կաթի մթերքների ծավալների աճը:

- **Համաձայն օրացուցային պլանի առաջին եռամսյակում նախատեսված է եղել Այծերի ծնի կազմակերպում և իրականացում,** համաձայն որի 2022 թ. հունվար մարտ ամիսներին իրականացվել է ծնի հաշվառում, համաձայն որի մինչև մարտ ամիսը (հիմնական ծինը փետրվար) ծնել է հղի կենդանիներից 24 գլուխ, այսինքն պտղատվությունը կազմել է 166%, որից ստացվել է 40 գլուխ ուլ: Ստացված ուլերից 22 գլուխը (155%) արու է, իսկ 18 գլուխը՝ էգ (45%):

**Կենդանիների նորմալ աճի ու զարգացման ստուգման նպատակով** ըստ **օրացուցային պլանի նախատեսված է եղել կատարել ստուգիչ կշռումներ** ըստ որի մեկ ամսական (15 գլուխ) էգ ուլերի միջին կենդանի զանգվածը կազմել է 6,1 կգ, իսկ 65-73 օրական հասակի 14 գլուխ էգ ուլերի միջին կենդանի զանգվածը կազմել է 8,6 կգ, իսկ 210 օրականում՝ 14 կգ: Սույն թվի սեպտեմբերի նաև ընտրություն է կատարվել 2022 թվականին ծնված էգ ուլերի միջև, որոնք կշռվել են և պետք է աճեցվեն հոտի վերարտադրության համար: Նրանց միջին կենդանի քաշը դեռևս ցածր է և կյանքը ստանալու գուցավորման 30-32 կգ հասնելու դեպքում:

Տնտեսական արդյունավետության անհրաժեշտությունից ելնելով ներդրվել է մատղաշին կաթով կերակրման նոր տեխնոլոգիա, որի դեպքում կիրառվում է անարատ կաթի փոխարինիչ (կաթի փոշի), իսկ այժեռից ստացված կաթը օգտագործվում է պանրի արտադրության համար: Նշված տեխնոլոգիական ներդրումը նպաստում է տնտեսության եկամտաբերության բարձրացմանը: Սակայն ծնից անմիջապես հետո, յոթ օրվա ընթացքում ուլերը կերակրվում են միայն իրենց մոր կաթով (խիժով), որով էլ պայմանավորված է ծնողի իմունիտետի փոխանցումը սերնդին՝ դիմակայելու շրջակա միջավայրի խնդիրներին:

Որպես կարևոր տնտեսական ցուցանիշ և հետազոտության թիրախային նպատակ՝ կաթնային մթերատվությունն ունի առանձնահատուկ նշանակություն մեր հետազոտության մեջ, որի նպատակով կատարել ենք ստուգիչ կիթեր, որի ամփոփ տվյալները հետևյալն են. 1-ին լակտացիա՝ 1,04 կգ, 3-րդ լակտացիա՝ 1,9 կգ, 5-րդ լակտացիա՝ 1,2 կգ: Կաթնային մթերատվության ստուգիչ կիթերի արդյունքները նաև վկայում են, որ առավել բարձր կաթնատվություն ունեն երրորդ լակտացիայի մաքիները, իսկ համեմատաբար ցածրը՝ առաջին լակտացիայի այժամայրերը:

Հարկ է նշել որ առկա է կաթնային մթերատվության բարձր գենետիկական պոտենցիալ: Այդ պոտենցիալի լիարժեք օգտագործումը սելեկցիայում կիրականացվի համալիր գործոնների միջոցով, որից առավելագույնը կենդանիների կերակրման, հյութալի կերերով ապահովման և սելեկցիոն կորիզ ստեղծելու միջոցով:

Ստուգիչ կթին զուգահեռ իրականացվել է այժամայրերի գնահատում, հաշվի առնելով կրծի վիճակը մեքենայական կթի համար, կրծապտուկների զարգացվածության և

համաչափության աստիճանը, ինչպես նաև տարբեր պատճառներով կրծի վրա վերքերի առկայությունը: Համալիր գնահատման արդյունքում հաշվի առնելով կաթնային մթերատվությունը, պտղատվությունը, կրծի կառուցվածքի առանձնահատկությունները մեքենայացված կթի համար, պարտադիր խոտանման համար առանձնացվել են 6 գլուխ այծամայր:

**Համաձայն օրացուցային պլանի** սույն թվի սեպտեմբերին նաև ընտրություն է կատարվել 2022 թ-ին ծնված էգ ուլերի միջև, որոնք կշռվել են և պետք է աճեցվեն հոտի վերարտադրության համար: Նրանց միջին կենդանի քաշը դեռևս ցածր է և այդ հիմքով նրանք կթույլատրվեն զուգավորման 30-32 կգ հասնելու դեպքում:

Վերոգրյալից գատ, **2019-2021 թ-ին ծնված այծերի համար կազմվել են ծագումնաբանական քարտեր, ըստ ծագումնաբանության կենդանիների հետազա գնահատման նպատակով:**

**2.2 Կենսաքիմիական հետազոտություններ.** Հաշվետու ժամանակահատվածում հետազոտվել է ՀՀ Շիրակի մարզի Կրաշենի այծաբուծական տնտեսությունում բուծվող այծամայրերի կաթի կենսաքիմիական ցուցանիշները տարբեր լակտացիաներում (1-ից 4-րդ), ինչպես որակական, այնպես էլ հումքից մթերք պատրաստման առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով: Կենսաքիմիական հետազոտություններն իրականացվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սննդի որակի հսկման լաբորատորիայում: Այծերի կաթում ուսումնասիրվել են լակտատդեհիդրոգենազ (ԼԴՀ), լակտոպերօքսիդազ (ԼՊ), հիմնային ֆոսֆատազ (ՀՖ) ֆերմենտների ակտիվությունը, միզանյութի մակարդակը: Ստացվել են տվյալներ հակաբիոտիկ տետրացիկլինի, լակտոզի (կաթնաշաքար), ընդհանուր սպիտակուցի և կազեինի պարունակության վերաբերյալ: Չափագրվել է կաթի ջրածնական իոնների կոնցենտրացիան (pH): Կենդանիների օրական սննդակարգը մեկ գլխի հաշվով ներառել է. խոտ՝ 2 կգ, համակցված գրանուլային կեր՝ 0,7 կգ, որը ներառում է սոյա, արևածաղկի շոռոտ, եգիպտացորեն, գարի և հավելումներ: Կենսաքիմիական ցուցանիշների համադրումը կաթնատվության հետ դիտարկվել է 25 գլուխ այծամայրի համար, կիրթը մեքենայական է:

Պարզվել է, որ լակտացիաների միջև տարբերություն է գրանցվում միզանյութի քանակի և ԼԴՀ ակտիվության դեպքում՝ նվազում 3-րդ լակտացիայում համեմատած 1-ի: Հետազոտման չորս լակտացիաների ընթացքում կաթի նորմալ pH-ի (5,8-6.2) պայմաններում դիտվել են ԼՊ և ՀՖ ֆերմենտների կայուն ցուցանիշներ 0,66-0,71 Մ/մլ և 6,4-7,03 Մ/լ: Եզրակացվել է, որ տարիքի հետ սննդի սպիտակուցների և ածխաջրերի ներծծումն ինտենսիվանում է, ինչն ուղիղ հարաբերական է կաթնատվության մակարդակի հետ, իսկ ԼՊ և ՀՄ ֆերմենտների ուրվագծված կայուն ցուցանիշները հիմք են ստեղծում շարունակելու հետազոտությունները պաստերացման տարբեր փուլերում ակտիվությունը պարզելու համար: Հատկանշական է, որ հետազոտված այծի կաթի մեջ տետրացիկլին չի հայտնաբերվել, ինչը կարևոր հանգամանք է սննդամթերքի անվտանգության համատեքստում: Ուսումնասիրությունները վկայում են, որ Կրաշենի տնտեսությունում բուծվող այծերի կաթում չորս լակտացիաների ընթացքում կաթնաշաքարի քանակը տատանվում է 3,89-4,5%, ընդհանուր սպիտակուցի մակարդակը՝ 2,68-3,8%, որտեղ 78-79% կազմում է կազեինը: Հարկ է նշել, որ միաժամանակ հետազոտվել է այծի կաթից ստանալից կաթնաշոռի որոշ կենսաքիմիական ցուցանիշները: Մասնավորապես, լակտոզի, ամոնյակի, միզանյութի քանակը և ՀՖ ֆերմենտի ակտիվությունը: Ուշագրավ է, որ նշյալ ցուցանիշները կաթի մեջ քանակապես հիմնականում գերազանցում են կաթնաշոռին, վերջինում ստացված տվյալները հետևյալն են. լակտոզի քանակը՝ 3,9%, ՀՖ՝ 5,32 Մ/լ, միզանյութը՝ 18,5 մգ/մլ և ամոնյակը՝ 10,4 մգ/մլ, ինչը վկայում է հումք-մթերք շղթայում ցուցանիշների նվազմամբ:

**3. Ոչխարաբուծություն.** Ընթացիկ տարում ՀԱԱՀ-ի Բալախովիտի ուսումնասիրոճնական տնտեսությունում, պետական ծրագրով ֆինանսավորվող թեմայի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Անասնաբուծությունում, մասնավորապես ոչխարաբուծությունում կարևորվում է արդյունաբերական տեխնոլոգիաների կենսաբանացումը: Տեխնոլոգիական մեթոդները ներդնելով արտադրությունում հնարավորություն է ընձեռվում ինտենսիվացնել ճյուղը՝ կենդանիների արտադրական պոտենցիալի բարձրացմամբ: Հատկանշական է, որ

տեխնոլոգիան պետք է լինի ոչ միայն տնտեսապես մատչելի, այլև՝ կենսաբանորեն նպատակահարմար և արդարացված: Վերը նշվածից ելնելով, մեր առջև խնդրի է դրվել բարձրացնել ոչխարների մթերատվությունը ու որակական կազմը: Ըստ նախատեսված ծրագրի տնտեսությունում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ոչխարների մտուրային շրջանի նախապատրաստում, որի նպատակով աշնանը ամբողջ գլխաքանակը ստուգվել է և կատարվել լրացուցիչ խոտանում: Մաքրվել և ախտահանվել է անասնաշենքերը :

Ելնելով տնտեսության կերի բազայից կազմվել է համապատասխան կերաբաժին տարբեր սեռահասակային խմբերի ոչխարների համար:

2022 թ. -ի հունվար ամսվա տվյալներով տնտեսությունում առկա է 72 գլ. ոչխար, որից 3-ը՝ խոյ, 69՝ մաքիներ:

Ոչխարների ծնի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և անցկացման նպատակով իրականացվել է 2022 թվականի նորածին գառների համարակալում, անհատական կշռում և հաշվառում /ծինը անցկացվել է հունվար-փետրվար ամիսներին /: Հունվար – փետրվար ամիսներին ծնվել է թվով 45գլ. գառներ, որից՝ արուներ 24 գլ., էգեր 21գլ.: Նորածին գառների միջին կենդանի զանգվածը կազմել է արուներինը՝ 3.03 կգ, էգերինը՝ 2.91 կգ :

Դրանից գատ կատարվել է նաև ընթացիկ տարվա 2.5 և 5 ամսական գառների կշռում:

Հետազոտությունները վկայում են, որ արուների կենդանի զանգվածը 2.5 ամսականում կազմել է՝  $19.6 \pm 0.37$  կգ, իսկ էգերինը՝  $16.7 \pm 0.29$  կգ, իսկ 5 ամսականում համապատասխանաբար՝  $30.7 \pm 0.4$  կգ և  $28.6 \pm 0.38$  կգ:

Նույն թվականի հունիսի 29-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Հայկական կիսանրբազեղմ կորիդելի տիպի ոչխարների խուզ: Խուզն իրականացվել է մեխանիկական եղանակով: Խուզից ստացվել է 187 կգ գեղմային բուրդ 39 կգ՝ գառան բուրդ:

Մեկ ոչխարի միջին բրդատվությունը կազմել է 3.11 կգ, իսկ մեկ մաքու հաշվով՝ 3.68 կգ:



**Նոյեմբերյանի տարածաշրջանի Կողբ համայնքի** վարչական տարածքում ձևավորվել է մազեխ ցեղի ոչխարաբուծական ֆերմա մոտ 1700 գլուխ: Կատարվել է ոչխարների նախնական գնահատում և ընտրություն:

Հոտը 80%-ով ձևավորվել է 2021թ.-ին ծնված էգ մատղաշով: Պլանվորվում է տնտեսության խոտանված կենդանիներն իրացնել մսի արտադրության նպատակով: Տնտեսությունը զուգավորման նպատակով գնել է 32 գլուխ մազեխ ցեղի արտադրող խոյեր:

Հուլիս ամսվա սկզբին ևս գնվել է 1750 գլ. 15-16 ամսական շիշակներ / 45-48կգ կենդանի զանգվածով / և 1.5 – 3 տարեկան 73 գլուխ խոյեր / 80- 90կգ կենդանի զանգվածով/ :

Ծրագրի շրջանակներում իրականացվել է կենդանիների նախնական ընտրություն, որի ժամանակ առաջնահերթություն է տրվել է մազեխ ցեղի բնորոշությամբ, բրդի միագույնությամբ և ցեղին բնորոշ ճարպապոչի ձևով:

Ներկայումս տնտեսությունում առկա է 3558 գլ ոչխար, որից 105գլ.խոյեր (3,04%), 3450` շիշակ (96,94%):

**Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի** վարչական տարածքում բուծվում է հիմնականում մազեխ ցեղի ոչխարներ: Հանդիպում է նաև խառնացեղեր, որոնք խոտանվում են ընտրության ժամանակ:

Մազեխ ցեղի ոչխարների հետազոտությունները կատարվել են Վազիր Օզմանյանի տնտեսությունում: 2022 թ. -ի սկզբում տնտեսությունում հաշվառվել է 339 գլուխ ոչխար, որից 4,42 %` արտադրող խոյեր, 79,64%` մաքիներ և 15,93 %` շիշակներ:

բոլոր պլանային միջոցառումները` գառների համարակալում / կտացման եղանակով / և հաշվառում: Հոտի նման կառուցվածքը միանգամայն արդարացված է մատղաշ ոչխարամսի արտադրության համար, որը ունի մեծ պահանջարկ ունի ինչպես հանրապետությունում, այնպես էլ հանրապետությունից դուրս: Նորածին արու գառների կենդանի զանգվածը կազմում է 3.3 -3.5կգ, էգերըինը` 2.8-3.2 կգ: Պետք է նշել, որ նորածին գառների կենդանի զանգվածը համեմատաբար ցածր է, որը հավանաբար պայմանավորված է հղիության երկրորդ շրջանում մաքիների ոչ բավարար կերակրմամբ:

Մսուրային շրջանում որպես կանոն ոչխարներին արացեճնում են, իսկ երեկոյան մեկ գլխի հաշվով կենդանիներին լրացուցիչ տրվում է 250 գր. խաղողի կորիզ: Հարկ է նշել, որ նման կերակրումը բավարար չէ հղի մաքիների սաղմի նորմալ աճի և զարգացման համար: Ուստի, ելնելով վերոնշյալից կազմվել և տրամադրվել է ֆերմերին համապատասխան կերաբաժին՝ հաշվի առնելով տնտեսությունում կերերի առկայությունը:

Հոտի վերարտադրության համար ընտրվել է մազեխ ցեղին բնորոշ 7-8 ամսական էգ գառներ, գնվել է 5 գլուխ 1.5 տարեկան խոյիկներ, իսկ ընթացիկ տարվա արու գառները 6-8 ամսականում իրացվել են մսի՝ 43-45կգ կենդանի զանգվածով: Կատարվել է մայրական կազմի տարիքային խոտանում՝ 55 գլուխ և 5 գլուխ խոյեր:

Մաքիների ընտրությունը տարվում է հիմնականում կաթնային մթերատվության բարձրացման և մսային հատկությունների բարելավման ուղղությամբ, որոնց համար անհրաժեշտ է իրականացնել համալիր արտադրատնտեսական և բուժման աշխատանքներ:

Ոչխարների զուգավորումն իրականացվել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, ուստի ծինն ակնկալվում է փետրվար-մարտ ամիսներին:


*Միջազգային համագործակցության համատեքստում* կենտրոնի գիտնականները կենսաքիմիական և տեխնոլոգիական հետազոտությունների արդյունքներն ամփոփել են գիտական հոդվածում և զեկույցով հանդես եկել Տիմիշուարայում կայացած Միջազգային գիտաժողովում- *International Scientific Symposium "Young People and Multidisciplinary Research in Applied Life Sciences; Section: Animal Husbandry and Biotechnology", organized by University of Life Sciences King Mihai I, Timisoara* (վկայականը կցվում է):

Հատկանշական է, որ կենտրոնը նպաստում է ուսանողների ներգրավմանը **հետազոտություններում**, մասնավորապես ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի բակալավրի ավարտական կուրսի ուսանող Սարգիս Գևորգյանը ներգրավված է եղել կենսաքիմիական լաբորատոր հետազոտություններում, ով ներկայում արդեն լինելով ՀԱԱՀ մագիստրոս, կենտրոնի գիտնականների հետ համատեղ մասնկացել է արդյունքների ամփոփմանը և վերոնշյալ միջազգային գիտաժողովում, որպես գիտական աշխատանքի համահեղինակ:

**Աշխատանքի արդյունավետությունը.** Ոլորտի իրականացվող տոհմային, տեխնոլոգիական և կենսաբանական համալիր հետազոտությունները հնարավորություններ են ընձեռում Հայաստանում կաթնային ուղղության այծաբուծության զարգացմանը, տոհմային կենդանիների իրացմանը համայնքի շահագրգիռ ֆերմերներին, Հայաստանում մեծ պահանջարկ ունեցող այծի կաթի և կաթնամթերքների (այծի պանիր, կաթնաշոռ) արտադրությանը:

**Հաշվետու ժամանակահատվածում հետազոտական կենտրոնի գիտնականների կողմից իրականացված աշխատանքների հիմնական արդյունքներն ամփոփվել են գիտական հոդվածներում, որոնց մի մասը տպագրված է, որոշը՝ հանձնված է տպագրության, իսկ մնացածը՝ ընթացիկ մշակման փուլում են SCOPUS-ի շտեմարաններ հանձնելու նպատակով:**

- **Տպագրված աշխատություններ.** 2 հոդված ”Ագրոգիտություն և տեխնոլոգիա” միջազգային գիտական պարբերականում
- **Միջազգային գիտաժողովին մասնակցություն. 1 աշխատություն՝** International Scientific Symposium ”Young People and Multidisciplinary Research in Applied Life Sciences; Section: Animal Hasbandry and Biotechnology”, Timisoara (արստրակտի գիրքը տպագրված է, հոդվածը լոյս կտեսնի առաջիկայում, մասնակցության վկայականը կցվում է)
- **Հանձնված է տպագրության. 2 գիտական աշխատանք՝** ”Ագրոգիտություն և տեխնոլոգիա” միջազգային գիտական պարբերականում
- **Ընթացիկ մշակման փուլում.** մնացյալ տվյալներն ամփոփվում են և գտնվում ընթացիկ մշակման փուլում՝ 2 աշխատանք SCOPUS շտեմարաններում հրատարակվելու նպատակով (վերապատրաստումը նպաստել է գիտաշխատողների շրջանում բարձր վարկանիշային ամսագրերում տպագրվելու վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը):



**Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի,  
զենետիկայի և կերակրման հետազոտական  
կենտրոնի տնօրեն՝**

**Յու. Մարմարյան**